

1329-6
ԿԿԿ

ԸՍՓԽՀ ՅԵՎ ՀՍԽՀ ՊԵՋԸ-ԱՎԻԱ-ՔԻՄ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ

ՊԵՋԸ-ԱՎԻԱ-ՔԻՄԸ ԵՍԼՄ-Ի ԵՄՂԱՂ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՈՒ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ԼՆՆԱԲԱՆՆ Ե

№ 6

Ս. Բ Ե Լ Ո Վ

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ ՀՐԱՑԱՆՈՎ ԺԻՇՏ
ԿՐԱԿԵԼ

«ՊԵՋԸ-ԱՎԻԱ-ՔԻՄ» ՀՐԱՏԵՐԱԿՈՒԹՅՈՒՆ

**ՀՄԽԳ ՊԱՋԸ-ԱՎԻԱԲԻՄԻ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅԱՄԲ
ԼՈՒՅՍ ԵՆ ՏԵՍԵԼ ՀԵՏԵՎՅԱԼ ԳՐԲԵՐԸ**

Կողմ

- | | |
|--|----|
| 1. Բաղդասարյան .—«Մովորիբ ուղմական դործը» | 25 |
| 2. Լիսովցեի .—«Տեխնիկան պատերազմում» | 13 |
| 3. ՊԱՋԸ-Ավիաբիմի բջիջներին կից սղա-բիմիական պաշտպանության խմբակներ (ծրադրեր և կազմակերպչական մեթոդական խնդիրներ) . | 10 |
| 4. Բանաձևեր ՀՄԽԳ ՊԱՋԸ-Ավիաբիմի Հայաստանյան 2-րդ համադումարի | 5 |
| 5. Խոզսևուլ .—«Իսկ և ինչպես պետք է անել մողելլիստների խմբակներում» | 10 |
| 6. Վ. Յեյտլիև .—«Ազալնիները ուղմական ծուսայության մեջ» | 10 |





623.5

A 3860 P

Ս. Բ Ե Լ Ո Վ

ԻՆՉՊԵՍ ՍՈՎՈՐԵԼ ԶՐԱՑԱՆՈՎ ԺԻՇՏ
ԿՐԱԿԵԼ



ՀԱՅՊՈԼԻԳՐԱՅԻ ՏՊԱՐԱՆ

Գառվ. 4391 Գրառնայվ. 2671 ք մ. 2000

ԻՆՉ ՊԵՏԲ Ե ԻՄԱՆԱ ՅԵՎ ԿԱՐՈՂԱՆԱ ԱՆԿԻ ՀՐԱՅԻԳԸ

Մենք չդիտենք, թե յերբ յերևան կդա պատերազմի վտանգը և յերբ և մեր բանվորա-դյուղացիական պետութիւնը մեզ կանչելու Միութեան սահմանները պաշտպանելու :

Իսոյց վտանգը միշտ կա : Ամեն ոք, ամեն ժամ կարող և առաջանալ տնտեսի մոմէնտ, յերբ արեւմտյան յերկրների դադաղած բուրժուազիան կփորձի հարձակել մեզ վրա : Դրա համար մենք պետք և միշտ պատրաստ լինենք դուրս բերելու վարժված՝ իրենց զենքը լավ նանաչող հեղափոխութեան ղինվորներ նրանց դեմ, վորոնք կփորձեն նորից ստրկացնել Միութեան աշխատավորներին : Այդպիսի ղինվորներ են լինելու Սորհրդային Միութեան բոլոր բանվորներն ու դյուղացիները : Դրա համար յուրաքանչյուր բանվոր և դյուղացի պետք և պատրաստ լինի մարտիկ դառնալու : Իսկ այդպիսին դառնալու համար պետք և ի հարկէ իմանալ մարտիկի գլխավոր զենքը՝ հրացանը, նրանից լավադույն ձեռով ողտոյել, այսինքն լինել լավ հրահար :

Միայն այդ դեպքում մենք կարող ենք հավատացած լինել, վոր կհաղթենք առանց ավելորդ զոհերի :

Իսկ ի՞նչ և հարկավոր ճիշտ կրակել կարողանալու համար :

Լավ հրաձիգ լինելու համար պետք է շատ լավ ճանաչել և խնամել հրացանը: Յեթև հրացանը լավ խր- նամվի, նա միշտ կգործի անխափան և ճիշտ: Բայց վորպեսզի խմանալ, թե ինչպես պետք է խնամել հրացա- նը, պետք է ուսումնասիրել նրա կառուցվածքը, պետք է խմանալ, թե վոր մասը ինչպես է դործում, ինչպես են գործում բոլոր մասերը միասին: Պետք է հրացանը կա- րողալ քանդել և սարքել, սրել, մաքրել, ժամանակին յուղել և ինքնուրույն կերպով վերացնել նրա վորքիկ անկանոնությունները:

Յերկրորդը, վոր անհրաժեշտ է՝ պետք է դիտենալ հրացանի մարտական հատկությունները. այսինքն՝ ինչպես է հրացանը խփում մոտիկ և հեռու տարածու- թյան վրա, արդյոք զնդալը հետո՞ւ յե թռչում, ինչպի- սի՞ ծածկարաններ և ծակում անցնում և ի՞նչը չի կա- րող ծակել: Պետք է խմանալ՝ ինչպե՞ս և թռչում զնդա- կը, յերբ նա դիպչում է նշանին, ինչպե՞ս է ազդում զնդակի թռիչքի վրա յեղանակը. հրացանի վո՞ր անկա- նոնությունները կարող են վատացնել հրաձգությունը. յե՞րբ է հրաձիգն ինքը մեղավոր լինում դրանում:

ԿԱՐՄԻՐ ԲԱՆԱԿԱՑԻՆՆ ԱՌԱՆՑ ԱՉԲԱՉԱՓԻ՝ ԿՐԱՁԻԳ ՉԵ

Ուրեմն պետք է վարժվել մինչև նշանը յեզամ տա- րածությունը վորոչև աչքաչափով:

Վերջապես, հրաձիգը պետք է ընտելանա արագ կերպով հարմար դրություն ստեղծել կրակը նախա- պատրաստելու համար: Այլ բոլորն ուսումնասիրելը հեշտ է:

Պետք է միայն աշխատել սովորածը դործնականում կիրատել և այնպես կիրատել, վորպեսզի հրաձիգի բա-

յոր շարժումները լինեն ճիշտ և կատարվեն ինքն իրեն .
կամ ինչպես ասում են , ավտոմատ յեղանակով :

ԿՐԱՅԱՆԻ ՄԱՐՏԱԿԱՆ ԿԱՏԱՌԻԹՅՈՒՆՆԵՐԸ

Այն հրացանը , վորով զինված և մեր կարծիք բա-
նակը և վորով մենք սովորելու յենք ճիշտ կրակել , կոչ-
վում և 1591 թվի տիպարի 3-դժանի պահեստատուսիա-
վոր հրացան : Այդ հրացանն իր կազմությամբ շատ
պարզ և և պինդ : Յեթև հրացանը սարքին և և հրաձիգը
յով և նանաչում նրան ու կարողանում և լավ խնամել ,
այդ դեպքում նա կարող և յերկար ժամանակ և անխա-
փան աշխատել : Յեզ անա հրացանի կազմության այգ
պարզությունը , նրա ամրությունը , դիմացկունությունն
ու անխափան աշխատելը հենց այն լավ կողմն և , վորով
տարբերվում և հրացանը մյուս զենքերից :

Հրացանից արձակված զնդակով կարելի չե մար-
դուն հարվածել $\frac{1}{4}$ կլմ - տարածության վրա : Իսկ մոտիկ
տարածության վրա նա ծակում և 35 հատ շամի տախ-
տակ յուրաքանչյուրը $2\frac{1}{2}$ սանտիմետր հաստությամբ ,
կամ $\frac{1}{2}$ մետր լայնությամբ հողակույտ , կամ վայան
պատ $\frac{3}{4}$ մետր հաստությամբ և կամ 2 աղյուսի հաս-
տությամբ պատ :

Հրացանը կարելի չե լցնել մեկ անգամից 5 փամ-
փուշտ , բայց կրակել կարելի չե մեկ-մեկ :

Դրա համար ել ճարպիկ հրաձիգը մեկ րոպեյում
կարող և կատարել 10-ից 12 արձակյուն : Դրա փո-
խարեն հրացանի մարտական ճշտությունը 400 մետրի
վրա (600 քայլ) շատ ավելի մեծ և , քան մնացած բոլոր
հրազենները : Բայց հրացանով ճիշտ խփելու շնոր-
քը մեկ անգամից ձեռք չի բերվում : Նախրան զնդակով

ամեն տեսակի նշանի ճիշտ խփելը, պետք է վորոշ բան իմանալ:

ԳՆԳԱԿԻ ԹՈՒՉԳԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՁԱԿՅՈՒՆԻ ԺԱՄԱՆԱԿ

Ի՞նչ է տեղի ունենում հրացանի մեջ, յերբ մենք կրակում ենք: Ահա թե ինչ: Յերբ զարկանը խփում է պատիճին, վերջինս բռնկվում է: Պատիճի այդ բռնկումից առաջացած կայծերը զարկուճի հատակում յեղած ծակոտիներից ընկնում են վառողի մեջ և բռնկում նրբան: Վառողի այրումից ստացվում են դաղեր: Այդ դաղերը հսկայական ուժով ցրվել են դալիս փամփշտանոցի մեջ ամեն ուղղութեամբ: Բայց փողի պատերը չինված են լավ պողպատից. նրանք շատ պինդ են: Փամփշտանոցն ավելի պինդ է և հաստ: Հրացանը հետեվից ամուր փակված է փամփշտանոցը պինդ փակող ամուր փակադակով: Ուրեմն դաղերը կարող են միայն առաջ դնալ, այսինքն գնալ դեպի փողանցքը: Այդ դեպի դուրս տանող անցքը փակված է զնդակով և վորպեսզի դաղերը դուրս պրծնեն, պետք է դուրս մղեն զնդակը: Հենց եդպես էլ լինում է:

Ամեն վոք, ով հրացան է կրակել, արձակյունի ժամանակ իր ուսի վրա հարված է զգացել. այդ առաջանում է հենց այն դաղերից վորոնք ինչպես ստացինք, հարվածում են ամեն ուղղութեամբ: Հենց դաղերի հետ թռչելու ձգտումը հարվածում է կրակողի ուսին: Այդ հարվածը կուշվում է հետահարված: Այդպիսի հետահարվածը սղտագործում են զնդացիքն ինքն իրեն լըցնելու համար:

Բայց բավական չե՞ միայն դուրս մղել զնդակը. անհրաժեշտ է նաև ստիպել նրան ուղից թռչել: Յեթև

գնդակը թռչում է դեպի առաջ՝ ծայրով, նա սղը հեշ-
 տությամբ է նեղքում - իսկ յեթև նա թափալվում է և
 թռչում է մերթ կողքի և մերթ հետևի վրա, այդ դեպ-
 քում ի հարկե նա չի կարող այնքան հեշտությամբ ողբ
 նեղքել և այնքան արագ թռչել: Ստիպել գնդակին ու-
 չիղ թռչել՝ նշանակում է նրան այնպիսի ուղղություն
 տալ, փորպեսպի միշտ ծայրով դեպի առաջ թռչի: Նը-
 րան ուղիղ թռչել և տալիս փողբ այն ակոսների շը-
 նորհիվ, փորսնք զանժում են փողի մեջ: Սակայն ի՞նչ-
 պես են ակոսները ստիպում գնդակին ուղիղ թռչել:
 Ահա թե ինչպես. գնդակը յերկար է: Չեղքով նետելիս
 նա չի թռչի ծայրով դեպի առաջ, այլ կթափալվի, այն
 էլ ամեն անգամ զանազան տեսակ: Նա նույնպես կթա-
 վալվի, յեթև նրան դուրս նետեն հարթ փողանցք ունե-
 ցող հրացանից: Իսկ յեթև ամեն անգամ տարբեր ձևվե-
 րով բամին և ողբ սկսեն խանդարել գնդակի թռիչքին,
 մենք յերբեք էլ չենք իմանա թե նա փոքրան տարա-
 ծություն կկարի և փոքրան նա կգնա կողքի: Իսկ չի-
 մանալով թե մինչև ուր է թռչելու գնդակը և արդյոք
 շա՞տ է նա կողքի գնալու, չի կարելի ճիշտ կրակել:
 Յե՞վ ահա փորպեսպի գնդակը չթափալվի, այլ ամբողջ
 ժամանակ ծայրով դեպի առաջ թռչի, մտածել են,
 ստիպել նրան՝ թռիչքի ժամանակ պտավելու: Յերբ
 փորեկ տարկա պտավում է իր շուրջը, նա ստանում
 է կայուն դրություն. այդ նկատելի յե թեկու՞հ հոյի
 վրա: Յեթև հոյը պտանցնենք, նա կվաղի առանց վայր
 բնկնելու: Վորպեսպի ստիպենք գնդակին իր շուրջը
 պտավել, հրացանի մեջ շինված են ակոսներ, վո-
 րոնք գնում են փողի միջով պտուտակած: Գաղերը
 սեղմում են գնդակը ակոսների մեջ և քանի վոր ակոս-
 ները շինված են պտուտակած, գնդակը նրանց միջով

դնալով սկսում և պտտվել և հետո արդեն պտտվում և մինչև իր թռիչքի վերջը :

Վորպեսզի ողբ քիչ դիմադրութունն ցույց տա գնդակին նրա թռիչքի ժամանակ, նրա առաջին մասը չինված է օուր ձևով. դրա համար ել ողբ դեմ չի առնում գնդակին, այլ ճեղքում և վերջինիս միջոցով, անցնում է նրա կողքերից, գնդակը թռչում և ավելի ազատ և նրա արագութունն այնքան ել չի պակասում :

Սակայն, բացի ողբից, վորը խանդարում է գրնդակին թռչելու, կա այդ թռիչքի վրա ազդող մեկ ուրիշ ույժ ևս : Դա յերկիրն է, վորն ամբողջ ժամանակ դեպի իրեն է ձգում գնդակը, ստիպում է նրան իր ծանրությամբ ցած իջնել և թռչել վոր թե ուղիղ, այլ թեք՝ աղեղնաձև գծով (նկ. 3) :

Կնշանակի հենց վոր գնդակը դուրս է թռչում փողանցքից, իսկույն և յեթ նա սկսում է կռվել ողբի և յերկրի ձգողական ուժի հետ : Յեվ քանի վոր այդ այդպես է, ապա գնդակը փողի մեջ ստանալով վորոշ արագութուն, կամաց-կամաց փոխում է այդ արագութունը հենց վոր դուրս է թռչում փողանցքից :

Այժմ արդեն իմանալով, թե ինչպես է գնդակը շարժվում փողի միջով, ապա և վերջինից դուրս թռչելով նաև ողբի միջով ու թե ինչպես են ազդում նրա թռիչքի վրա ողն ու յերկիրը, կարելի յե խոսել այն մասին, թե ինչպես պետք է անել, վորպեսզի կարելի լինի նշանին ճիշտ խփել :

Պետք է հիշել, վոր նշանին դիպցնելու համար անհրաժեշտ է՝

1. Կարողանալ ճիշտ նշանոց դնել և վերջինիս ճիշտ հաստման համար կարողանալ վորոշել մինչև նշանը գտնվող տարածութունը :

2. Ճիշտ վորոշել նշանատության կետը :

3. Կարողանալ հրացանը նշան բռնել :

4. Ճիշտ կրակ բանալ :

Խնչպե՞ս հրացանը նիշտ նշանին ուղղել :

Յեթև մենք ուզում ենք զնդակը նիշտ առարկային դիպցնել, սպա պետք է դեպի այն ուղղենք նաև փողանցքը : Միտք շունի ուղղել փողանցքը վորևէ մեծ առարկայի, որինակ՝ տան, յեթև այդ առարկան մտա է կանգնած հրածղին : Իսկ յեթև առարկան փոքր է և հետո, այդ դեպքում հարկավոր է արդեն ափելի նուրբ նշանատություն : Այդպիսի նուրբ նշանատության համար էլ հրացանի լցամասի վրա շինված է գիտացավոր նշանոցը, իսկ փողի վերջում՝ հատիկը : Նշանատության ժամանակ մեր աչքը պետք է տեսնի յերևք կեա՝ դիտոցը, հատիկը և նշանը : Չի կարելի այնպես անել, վոր միանգամից կարելի լինի պարզ և վորոշ տեսնել բոլոր այդ յերևք կետերը : Յեթև հրածղից պարզ տեսնում և նրանցից մեկը, մյուսները մշուշապաա են յերևում :

Հրածղուրյան ժամանակ պետք է աշխատել նշանը պարզ տեսնել : Այդ դեպքում հատիկն այնքան պարզ չի յերևա, ինչպես նշանը, սակայն ափելի պարզ կերևա, քան դիտոցը : Նշանատության այդպիսի յեղանակն ամենածեղուն է : Պետք է աշխատել, վոր նրանատությունն ամեն ժամանակ միատեսակ լինի, վոր հատիկի դրսեթյունը դիտոցում միշտ միևնույնը լինի : Անհրաժեշտ է, վոր հատիկի վերին մասը (սուր ծայրը) միշտ ընկած լինի դիտոցի մեջտեղը՝ նրա յեղբերին հափտտար, ինչպես գույց է տրված գծանկարի վերին պատկերում (տես նկ. 1) :

Ուրեմն՝ առաջին խնդիրն է լինելու, սովորել՝ աչքով ճիշտ և միատեսակ նշան բռնելը Յեթե դրան վարժվեցինք, ապա միշտ էլ հավասար հատիկ կվերցնենք:

Իսկ յեթե թողնենք, վոր հատիկի գագաթը վեր բարձրանա նշանացի դիտոցի մեջտեղից (մեծ հատիկ) կամ ընդհակառակը, հատիկն իջեցնենք ցած (փոքր հատիկ), գնդակը ճիշտ չի թռչի: Մեծ հատիկի ժամանակ գնդակը կթռչի բարձր, իսկ փոքրի դեպքում՝ ցածր:

Գնդակը նույնպես ճիշտ չի թռչի, յեթե հատիկը վերցված է դիտոցում աջ կամ ձախ:

Յեթե հատիկը տանենք աջ, գրնդակն էլ աջ կողմը կլիցքվի. իսկ յեթե հատիկը դեպի ձախ վերցնենք, գնդակն էլ ձախ կլիցքվի:

Յեթե հրաձիգը հրացանն ուղիղ չի բռնում, այլ լիցքում է աջ, կամ ինչպես ասում են, պառկեցնում է դեպի աջ, ապա գնդակը դիպչում է դեպի աջ և ցածր: Իսկ յեթե պառկեցնում է դեպի ձախ, ապա գնդակն էլ դիպչում է դեպի ձախ և ցածր (տես նկ. 2):



Նկ. 1

Վերևում հատիկի ճիշտ դրումը թյունը հատիկի դրությունը՝ վերևից 2-րդ և 3-րդում մեծ և փոքր վերևից 4-րդում և 5-րդում հատիկը կողքի յն:



Նկ. 2. Նշանացի դիտոցը հրացանի ճիշտ և սխալ դրությունների ժամանակ:

Այնուհետև յնքը ճիշտ ու միատեսակ հաժաօար հատիկ վերցնելու խնդիրը հաջողվում է, պետք է վարժ-վել հրացանն ուղղել ճիշտ աչն կետին, վորին ուղում ենք դիպցնել զնդակը :

Հրացանի հետ կան անոթներ, վորոնցով կարելի յէ ստուգել նշանատությունը :

Հրացանը զնելով վորի վրա թեկուզ ավագով կամ թեկով յցրած պարկի վրա և աչդպիսով տալով նրան կայուն դրություն, նշան բոնիր կետին և մեկն ու մեկին խնդիրք թող ստուգի, թե արդյո՞ք ճիշտ և նշան տնկած :


Մեկ անգամ հրացանը շուտ կգա, կամ կարող է հատիկը սխալ վերցվել, բայց վերջում կտեսնես, վոր ամեն ինչ լավ է : Յերբ ինքը՝ հրաձիգը կամ լավ խր-վող մի քնկեր կտեսնի, վոր աչն զիծք, վորն անց-նում և հրաձիկ աչքից դիտացի միջով և հատիկի դա-դաթով՝ իր ծայրով նստում և ճիշտ աչն կետի ցածի մասում, վորին նա բոնել էր նշանը, ու բեմն նշանատու-թյունը ճիշտ է :

Սակայն ինչպես արդեն ասված է, հրացանից դուրս թռած զնդակն այնպես չի թռչում, ինչպես վողն և կանգնած : նրա վրա սպողում է յերկրի ձգողականու-թյունը :

Գրա համար էլ նշանին, որինակ՝ նրա գլխին և վոչ թե վտարերին դիպցնելու համար պետք է փողն ուղղել ավելի բարձր, քան մեր նշանատության կետը : Սակայն վո՞րքան բարձր : բարձր աչնքան, վորքան դեռ զնդակը նշանին հասած՝ կիջնի : Սակայն նշաննե-րը կարող են դանդել հրաձից տարրեր հետախորու-թյունների վրա : Ուրեմն այնպես և դուրս դալիս, վոր վորքան հեռու յէ նշանը, աչնքան էլ ոչ ոք և շատ

խարճրացնել փողանցքը: Իսկ թե ամեն անգամ փոր-
քածն բարձրացնել, այդ պետք է միտք պահել:

ПРЕВЫШЕНИЕ ТРАЕКТОРИИ



Նկ. 3. Գնդակի թօխչիի դիժը:

Վորսորդն այդպես էլ անում է: Նա շատ լավ դի-
տես, փոր յերբ փորսը գտնվում է հարյուր քայլի վրա,
պետք է ավելի բարձր նշան բռնել: Գիտես նույնպես,
թե փորքան բարձր բռնել: Թե փորքան բարձր բռնել,
վորսորդի համար դժվար չե այդ հիշելը, քանի փոր
վորսորդական հրացանը խփում է ընդամենը 120—130
քայլի վրա: Սակայն մեր հրացանի մարտական հեռա-
հարուժյունը շատ մեծ է և հիշել թե ամեն անգամ
նշանը վորքան բարձր պետք է վերցնել, չի կարելի:

Այդ գործը հեշտացնելու համար էլ հրացանի վրա
չիված է նշանոց՝ բաժանումներով և վեր ու վար շարժ-
վող դիտոցով: Յեթե այդ դիտոցը գնենք այն խազին,
վորի վրա գրված է մինչև նշանը յեղած տարածու-
թյունը, ապա փողը կբարձրանա այնքան, փորքան
վոր պետք է գնդակը նշանին հասնի: Ուրեմն նշանին
դիպցնելու համար պետք է ճիշտ նշանոց դնել. իսկ
ճիշտ նշանոց դնելու համար պետք է իմանալ տարա-
ծությունը մինչև նշանը: Կան շատ բազմազան անոթ-
ներ, վորոնցով կարելի չե իմանալ վորևև առարկայի
հեռավորությունը: Բայց չե՞ փոր պատերազմի ժա-
մանակ ամեն մի մարտիկ չի կարող սպասել նման ա-

նախնորքի և ժամանակ ել չի ունենա այդտեղ նրանց հետևից բնկնելու: Արեմն նա պետք և սովորի ինքը վորոչեւ մինչև նշանն բնկած տարածությունն աչքաշափով: Հեռավորություններն աչքաշափով վորոչեւ լուն վարժվելը կարող և և՛ դյուրում ապրողը և՛ քաղաքում աշխատողը: Դուրս յեկար աշխատանքից, գործքից կամ թե դյուրում՝ կալից, մտքումդ վորոչիք այն խնդիրը, թե որինակ, քանի քայլ կլինի քո տեղից մինչև մի վորեւ ծառ, քար, տաանձին տուն և ստուգիր քեզ շափիր քայլերով, տես ճիշտ ես վորոչեւ արդյո՞ք:

Մեկ անգամ ճիշտ չի լինի, յերկրորդ անգամ չես կարող վորոչել, իսկ յերրորդ անգամ արդեն դուրս կգա ճշմարտության մտտիկ: Վարժվելով հեռավորությունն աչքաշափով վորոչելուն, այնուամենայնիվ պետք և հիշես, վոր առանց աչքաշափի դու երաճից չես:

ՆՇԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԵՏԻ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ

Գնդակին կարող և քշել նաև քամին. նրա թռիչքի վրա կարող և ազդել և յեղանակը: Յե՛վ վերջապես մեծ նշանակություն ունի իրեն՝ հրացանի խփելը և նրա սարքին չլինելը:

Գնդակի թռիչքի վրա շատ ավելի յե ազդում աջից կամ ձախից վշող քամին: Յե՛վ հասկանալի յե թե ինչու: Արինակ՝ վերցնենք լողորդին, վոր ուզում և լողալով կարել սրբնթաց դետը: Ի՞նչ պետք և անի նա նախորոշված տեղը հասնելու համար: Պարզ և, վոր նո պետք և լողա քիչ թեք, այսինքն հոտանքին մի քիչ հակառակ: Նու յին ևլ գնդակը նշանին դիպցնելու համար: յերբ քամին աջից և շ պետք և նշանը բռնել ավելի աջ:

իսկ յերբ քամին ձախից ե՛ ավելի ձախ: Էրացանը նշանառութեան կետից այս կամ այն կողմը բռնելը պետք ե լինի այնքան, վորքան քամին ե ուժեղ:

Կան քամու յերեք տեսակներ՝ թույլ, մեղմ և ուժեղ: Մեղմ քամին 400 քայլ հեռավորութեան վրա տեղի ունեցող հրաձգութեան դեպքում գնդակին մոտ 30 ակ. կողքի յե քշում: Իսկ 800 քայլ հրաձգութեան դեպքում՝ մոտ 1 մետր:

Ուժեղ քամին գնդակին շեղում ե 2 անգամ ավելի, իսկ թույլը 2 անգամ պակաս, քան մեղմ քամին:

Քամու ուժը կարելի յե վորոշել այսպես:

1. Ուժեղ քամու ժամանակ բարակ ծառերը ճոճվում են, տախց բռնած թաշկինակը, ձեռքից դուրս ե պրճնում:

2. Մեղմ քամու ժամանակ տատանվում են ծառի ճյուղերը, թաշկինակին ուժեղ ծածանվում ե:

3. Թույլ քամու ժամանակ, ծառի տերեւները միայն խշխշում են, իսկ թաշկինակը միայն շարժվում ե:


Լավ ըմբռնելու համար, թե ամեն տեսակ քամու դեպքում հրացանը վորքան պետք ե նշանառութեան կետից այս կամ այն կողմն տանել, այստեղ նկարված են թիրախներ, դրված տարբեր հեռավորութեանների վրա (տես նկ. 4):

Նայելով նրանց վրա, կարելի յե տեսնել, թե կողքի ինչպիսի քամու ժամանակ, վորչափ պետք ե հրացանը նշանառութեան կետից այս կամ այն կողմը տանել:

Քանի վոր իր թռիչի ժամանակ գնդակը պտտվում ե և պտտվում ե իր շուրջը՝ ձախից աջ, ապա նա վորքան հեռու յե թռչում, այնքան ավելի յե թեքվում դեպի աջ (յեթե քամի չկա): Գնդակի այդ թեքումը դեպի աջ՝ կսպում ե խոտորում:

Ահա թե ինչու, յերբ քամին ձախից ե, հրացանը նշանառութեան կետից շեղի ձախ տարդում ե ավելի

շատ, քան դեպի ակ, յերբ քամին ակից է: (Տես ինչպիսի է ջուրը արժան 4-րդ նկարում):



Նկ. 4. Ինչպես պետք է նշան բռնել քամու ժամանակ

Վարքան դեղակը հետո յե թռչում, այնքան ակնի յե կորցնում իր արադությանը. նրա հաջարդ յուրաքանչյուր 100 քայլ թռիչքի վրա, քամին նրան ավելի և ավելի յե թեքում: Որինակ՝ ձախից ուժեղ քամի փչելու դեպքում, 400 քայլի վրա, հրացանը նշանառության կենից սարվում է մեկ թիրախ դեպի

ձախ, 600 քայլի վրա՝ 2 թիրախ, իսկ 800-ի վրա արդեն՝ 4 :

Վերջնական, վոր դարձյալ կարող ե ազդել նշանառութեան կետի ճիշտ ընտրութեան վրա, դա հրացանի հարվածելութունն ե : Առհասարակ հրացանը պետք ե վոր նախորք ստուգված լինի . բայց այլ ամեն անգամ չի կատարվում :

Իմանալով իր հրացանի հարվածելութունը, անպայման չպետք ե մոռանալ, թե վորքան բարձր, ցածրր, աջ կամ ձախ ե խախտմ նա :

Պետք ե նաե կարողանալ հրացանը խնամել : Պետք ե հասկանալ, վոր չի կարելի հրացանն ուղղակի ցուրտ տեղից տաք տեղ տանել, ալ պետք ե թողնել, վոր նա թացանա դով տեղում ե ապա մաքրել :

Հետեվել, վոր հրացանը վայր չընկնի ե չդիպչի վորեւե բանի : Հրացանը սվինի ծայրի վրա դեպին չըղնել : Հրացանը սվինից բռնելով չբարձրացնել, նրանով վորեւե պինդ բան չծակել : Յերբեք վոչ մի բան չխցկել վորդանցքը :

Ամեն պարապմունքից հետո սրբել հրացանը ե նոր իր տեղը դնել :

Յեթե բուրդ չկա, հրացանը պետք ե ամուր կախել առատաղից կամ պտտից, սակայն դռնից ե վառարանից հեռու : Յեթե հրացանը բուրդի վրա չե, սվինը պետք ե հանվի, փակադակը պետք ե բաց լինի ե հրահանը դեպի ձախ թեքված : Բացի այդ, ինչպես վորսորդը վորսից առաջ գննում ե իր գնեքը, այնպես ել ամեն մի հրաձիգ պետք ե տեսնի, թե արդյոք սարքին ե իր հրացանը :

Պետք ե նայել արդո՞յք հատիկը խախտված չե ե չի՞ շարժված տեղից : Արդյոք նշանացույցի շրջանակը չի՞ շարժվում կամ չի՞ ծոփած : Կարող ե ե փողն ել ծոփած լինել :

Պետք է ստուգել, թե շամփուրն ամրացված է, թե վոչ: սփինի անրիկը յա՛վ է պնդացրած: Արդյոք փակադակն ամուրք է փակված ու իջեցված է հրահանր: Արդյոք յա՛վ է փակված պահեստատուփը:

Վերին և ներքին սղակները նույնպես պետք է հափտարաշափ պտուտակված լինեն՝ վոչ ձիղ, վոչ ել թույլ: Պետք է նայել՝ արդյոք սփինը հրացանի վրա չի՛ շարժվում և միշտ արդյո՞ք պինդ են պտուտակված պոչի և հենարանի պտուտակները:


Յեթե գոլությունն ունի այդ անհանսնություններից թեկուզ և մեկը, հրացանը ճիշտ չի խփի:

ԿՐԱՁԳՈՒԹՅԱՆԷ ՊԱՏ- ՐԱՍՏՎԵԼԸ

Այժմ պետք է սովորել, թե ինչպե՞ս ճիշտ կերպով պատրաստվել հրաձգության և ինչպե՞ս կրակել:

Սկսենք հրաձգությանը պատրաստվելուց: Հրաձգության համար հրաձգի գրությանը կարող և լինել ամեն տեսակ, միայն թե նա իրեն հարմար զգա

և պենքը լինի կայուն: Ամենահարմար գրությանը, իհարկե, այն է, յերբ կարելի չե լինում կրակել պտուտակով: Բայց լինում են դեպքեր, մանավանդ պատերազմում, յերբ պտուտակով հրաձգին նշանը չի յերևվում: Այդ դեպքում նա պետք է բնդունի մի այլ գրությանը:



A 3860



Նկ. 5. Հրաձգության կանգնած

վորից հնարավոր լինի նշանը տեսնել Այդպիսի դրու-
թյուններն են, բացի սլառկամ կրակելուց, նաև ծնկած,
նստած և կանգնած կրակելը:

Կանգնած կրակել սովորելը շատ ավելի դժվար է,
քան այլ դրությամբ: Իսկ սլառկամ կրակելը՝ ամե-
նածեղնատուն է: Ուստի մենք կանգ կանոններ այդ յե-
կու՝ կանգնած և սլառկամ դրությունների վրա ավե-
լի յերկար:

Նախ և առաջ, ի՞նչ-
պես պետք է կանգ-
նել կանգնած կրա-
կելու համար: Իի-
պուկ կրակելու համար
պետք է ամուր կանգ-
նել վտաքերի վրա:
Իիշո՞ւ: Հենց նրա հա-
մար, վոր յեթե հրա-
ձիգն որսովի, նրա
հետ միասին կշարժ-
վեն նաև ձեռքերը՝
հրացանն ուսին դեմ
տալիս: Իսկ յեթե ձեռ-
քերը շարժվեցին, ու-
րեմն հրացանն ել
կշարժվի: Ապա յեթե
հրացանն ել շարժվեց,
դնդակն ել ուղղալի



կգնա վող թե՛ դեպի նշանը, այլ «կաթ տոնելու»:

Ուժեղ պետք է կանգնել նաև այն սլառձառով, վոր
ինչպես ասացինք, կրակելու ժամանակ տեղի յե ունե-
նում հետահարված, հրացանը հետ է խփում: Ուրեմն
հրաձգության ժամանակ, կրակողն անպայման պետք

ե ամուր կանգնի վոտքերի վրա, վորպեսզի կրակելիս չլարժվի և վորզը չզնա աջ ու ձախ, կամ չցնցի վերև:

Աձևնից լավ կլինի հրաձգութեան ժամանակ վոտքերը քիչ հեռացնել միջյանցից: Իսկ հրացանն ուսին ավելի հարձար կերպով դեմ տալու համար, վոչ միայն պետք է հեռացնել վոտքերը, այլև պետք է կողքով թեքվել դեպի նշանը: Կողքի վրա դառնալով, հրաձիգը վոչ միայն ամուր կկանգնի վոտքերի վրա, այլև առաջ ավան կլինի ձախ ուն ու ձախ ձեռքը: Իսկ ձախ ձեռքով ավելի կհեշտանա հրացանը պահելը և ավելի ճարպկորեն հրացանն ուսին դեմ տալը: Ուրեմն՝ կանգնած կրակելու պատրաստվելու համար պետք է կողքով բեխվել դեպի նշանը, այսինքն՝ կատարել կես դարձում դեպի աջ: Այնուհետև ե՛լ ավելի կայուն լինելու համար պետք է կես քայլ հեռացնել վոտքերը և կանգնել հավասար և ուժեղ գույգ վոտքերի վրա (տ. նկ. 5):

Այժմ տեսնենք, թե վորտե՞ղ և ի՞նչ կերպ բռնել հրացանը, նույնպես և աջ ու ձախ ձեռքերը:

Հրացանի կոթը բռնվում և աջ պայուսակի մոտ: Ինչո՞ւ: Վորովհետև այդ գրութեամբ հարձար և լրցնելը, նույնպես և կարելի չէ հեշտ ու արագ կերպով հրացանն ուսին դեմ տալ: Ձախ ձեռքը հրացանի հեծարանն և բայց հենարանն ավելի ամուր և հանդիստ կլինի, յեթե նա իր հրացանը հենում և մեջտեղից: Ուրեմն ձախ ձեռքի տեղը նշանոցի տակն է: Աջ ձեռքը պետք է պատրաստ լինի հրացանը լցնելուն և ձգանը բաշխելուն: Ուրեմն՝ նրա տեղը փակադակի և ձգանի մոտն է: Բացի դրանից, աջ ձեռքը նույնպես պահում և հրաշանին, վորովհետև մինչև վակադակի աշխատելը նա գրված է խոստովի պարանոցին: Այժմ մենք տեսնում ենք, վոր ձախ ձեռքի մտաները պետք է դառնան

վեն հրացանի մեջտեղում, ձեռքի տիր դեպի վեր: Ձախ
ձեռքի մատերը միայն պահում են հրացանը, վորի
պեպքում բուժ մատի փափուկ մասը հենվում և կա-
մրջակին, իսկ մյուս յերեք մատները միասին դրված,
պահում են փողակալը: Իսկ ձախ ձեռքի մատները,
բացի ցուցամատից, ամուր պահում են հրացանը խը-
զակոթի պարանոցը խտտելով:

Պտուկած կրակելու համար հրաձիգը պահում և,
կազմելով կես շրջան դեպի նշանը, տափակ փովելով
դետնի վրա: Այդ դեպքում նա պետք և լայն փոխ վտա-
քերը, հենվի յերկու արմուճակների վրա և բարձրացնի
կուրծքն ու վրուխը:

Ձախ արմուճակի տակ պետք և վորևե փափուկ բան
դրվի և յերկու արմուճակների համար ևլ պետք և կրուն-
կով փոսիկներ շինվին: Ձախ ձեռքով պետք և բռնել
հրացանը նշանոցի տակից: Իսկ աջը՝ հրացանը լցնելուց
սուաջ պետք և դնել փակադակի կոթունի վրա, իսկ
լցնելուց հետո՝ ազուստի պարանոցի վրա:

Նստած հրաձգությունն իր կայունությամբ հեռ
չի մնում պահածից:

Նստած կրակելու համար, կոչիկով պետք և յեր-
կու փոսիկներ շինել, վորոնց վրա հետո պետք և հեն-
վել կրունկներով:

Ավելի լավ և կես կողքի վրա նստել դեպի նշանը,
բաց անել վտանները և կրնկներով հենվել փոսիկներին:
Պետք և ամբողջ մարմինը թեքել դեպի սուաջ և ձախ
արմուճակն ևլ այնքան սուաջ տալ, վոր նա դիպչի ձախ
վտաքի ծնկանը և լինի ծնկոսկրից ցած: Այդ ավելի
կայունություն կտա ձախ արմուճակին, քան թե նրանով
սողակի ծնկանը հենվելը: Աջ արմուճակը հենվում և

ուղղակի ծնկի ծալածքին: Արա ներսի կողմից և վոշ
թև վերելից:

Մեկած դրուխտանն աչապես ևն ընդունում: Հրա-
ծիզը հետ և բաշում աջ ծունկը և աջ վոտքը, կամ ա-
ռաջ և տուխո ձախ վոտքը: Հետս իջնում և աջ ծնկի
վրա և աճուր նստում աջ վոտքի կրնկի վրա: Աջ ձեռ-
քը պահում և ախպես, ինչպես կանոնած կրակելուն
պատրաստովիս: ժամանակ, իսկ ձախը հենում և ար-
ժունկով ձախ ծնկին: Պետք և սովորութիւն դարձ-
նել ձախ արժունկը հենել վոշ թև ուղղակի ծնկուկքին,
այլ ծնկի փափուկ ժառին: Այլապես ձեռքը կղողա և
հրացանը կխաղա ամեն կողմի վրա: Հրածիզն ինչպես
ել վոք կրակի, պտուկած, թև նստած, նա պետք և հե-
նարանից ողտվի, յեթև աղպխսին ձեռքի տակ ունի:
կարող և իրրե հենարան ծառայել ամեն մի հողաթումք,
ծառի նյուղ, ցանկապատ և այլն: Բայց հենարանից
ել պետք և հմտորեն սլտովել կարողանալ: Արինակ՝ յե-
թև հրացանը դնենք ուղղակի ցանկապատի կամ վոքեկ
կոշտ ստարկայի վրա ու կրակենք, նշանին յերբեք
չենք դիպցնի:



նկ. 7. Հրածուխտան՝ ծնկած

Արձակուճնի ժամանակ
հրացանը տեղից կլթուշի և
դնողիք կողքի կզնա: Ա-
մենից լավ կլինի աղ կոշտ
հենարանի վրա վոքեկ փա-
փուկ բան դնել՝ թեկուզ
մի կտոր ճիւղ, վերաբղու և
այլն: Իսկ յեթև հրածիզը
ձեռքի տակ վոքեկ փափուկ
բան՝ շունենա, ալիկի լավ
և էրանկիս ժամանակ հրա-
ցանը պահի ձեռքում, իսկ

ձեռքը՝ հենարանին : Այդ դեպքում հրաձգութիւնը կարծես թէ կլինի ձեռքից՝ սակայն ունենալով հենարան :

Այդ բոլոր դրութիւնները, վորոնց մասին մենք այժմ խոսում ենք, կարելի չե նաև փոփոխել այնպես, ինչպես այդ հարմար կլինի հրաձգի համար :

Պետք է միայն պահպանել հետեւյալ կանոնները :

1. Հրաձիգը պետք է պարզ տեսնի նշանը :

2. Հրաձիգը պետք է կարողանա նոր դրութեան ժամանակ արագ և ճարակորեն լցնել հրացանը, յետևեալ հարկաւոր է նշանացույցը փոխել և ավելի հարմար նշան բռնել :

3. Հրացանը պետք է լինի կայուն, վորի համար լավ կլինի ունենալ վորևէ հենարան թեկուզ հենց արմուկների համար :

4. Լավ կլինի ունենալ ծածկարան, վորը ծածկի հրաձգին հակառակորդի աչքից, իսկ ավելի լավ կլինի՝ նրա գնդակոծումներից :

Մանավանդ կարելի է կայուն դրութիւն ստեղծելը կանդնած ժամանակ : Այստեղ պետք է աշխատել ողտվել վորևէ հենարանից, թեկուզ և միայն արմուկների համար :

ՀՐԱՑԱՆԸ ԼՅՆԵԼՆ ՈՒ ԳՆՏԱՐԿԵԸ

Հրացանը լցնել կարելի չե՝ մեկ փամփուշտով, հինգ փամփուշտով առանց պահուստակի և հինգ փամփուշտով պահուստակով : Մեկ փամփուշտ լցնելու համար պետք է ուղղակի փամփուշտը դնել փողատուփի վերին պատուհանի մեջ : Իրանից հետո պետք է առաջ մղել փակադակը փամփուշտի հետ և փակել : Պետք է խուսափել փամփուշտը փամփուշտանոց տանել մասով, վորովհետեւ սովորութեամբ կրտսնա հրացանը լցնելու հետ խոսք անել :

Հրացանն առանց պահուանակի հինգ փամփուշտով
լցնելու համար պետք է փամփուշտները դնել մեկ-մեկ
և յուրաքանչյուր փամփուշտ աջ ձեռքի բութ մատով
ներս տանել ախջան, մինչև փորնա տեղ բանա հա-
ջորդ փամփուշտի համար: Հինգերորդ փամփուշտը
չպետք է ներս տանել, այլ պետք է փակադակով ներս
ձգել փամփուշտանոցը և փակադակը փակել:

Պահուանակով լցնելիս, պետք է սովորություն դարձ-
նել բութ մատով ուժեղ և ուղիղ սեղմել փամփուշտ-
ները: Այդ նրանց պետք է սեղմի ուղղակի վերից վար,
այլապես պահուանակը տեղից դուրս կթռչի և վերելքի
փամփուշտները մի կողմ կսահեն:

Գտաարկելու ժամանակ պետք է բացել փակադա-
կը և դրանով դուրս նետել փամփուշտանոցում դտնվող
փամփուշտը. այնուհետև ցուցամատի փափուկ մատով
պետք է սեղմել պահեստատուսի կափարիչի մղլակը:
Այդ ժամանակ չպետք է թողնել, վոր փամփուշտները
գետին ընկնեն, այլ պետք է անպայման ձեռքով բռնել:
Այլապես փամփուշտները կարող են փոշտավել և կեղ-
տոտել փամփուշտանոցը: Իսկ փամփուշտանոցի կեղտոտ-
վելը կվատացնի հրաձողության դիպուկությունը:

ՆՅԱՆՈՅԻ ԿԱՍՏՈՒՄԸ

Լցնելուց անմիջապես հետո, յեթև կարիք կա,
հաստվում և նշանոցը: Պետք է իմանալ, վոր յեթև մին-
չեվ նշանը յեղած հեռավորությունը 300 քայլից պա-
կաս և, ուրեմն նշանը մշտական է: Անթև 300-ից մինչև
500 քայլ և, պետք է դնել նշանոց 4: Անթև 500-ից
մինչև 700 քայլ և, նշանոց 6, 700-ից մինչև 900 քայլ,
նշանոց 8 և այլն:

Սակայն նշանոցը փոխելու վրա ժամանակ չկորց-

նելու համար, կարելի չե նաև մշտական նշանոց դնել հետեվյալ հեռավորությունների վրա .

1. Յեթև միայն գլուխն և յերևում (25—30 սմ) մինչև 450 քայլ հեռավորության վրա :

2. Յեթև նշանը պտոկած և (նրա մեծությունը 50 սմ և) մինչև 60 քայլ :

3. Յեթև կանգնած և, կամ շարժվում և (նրա մեծությունը 1 մետր 70 սմ և) մինչև 900 քայլ :

4. Հեծյալների վրա, մշտական նշանով կրակել կարելի չե մինչև 1100 քայլ, սակայն 300 քայլից ափելի բոլոր հեռավորությունների վրա պետք է նշան բռնել նշանի վոչ թե ցածի, այլ վերևի յեզրին :

Նշանացը հաստելու համար (մինչև 12 աստիճանացույցը) պետք է բուխ մատով և ցուցամատով սեղմել անբիկի մղլակները, ապա պետք է քիչ բարձրացնել շրջանակը, անբիկը տանել դեպի հարկ յեղած աստիճանը, մինչև փոսիկին դեմ առնելը : Դրանից հետո պետք է բաց թողնել մղլակները և պտոկեցնել շրջանակը :

Յեթև նշանոցը 12-ից ավելի չե, պետք է բարձրացնել նշանոցի շրջանակը և անբիկը շարժել մինչև հարկ յեղած բաժանման խաղը :

ԿՐԱՅԱՆՆ ՌՈՍԻՆ ԴԵՍ ՏԱԼԸ, ՆՇԱՆ ԲՈՒՆԵԼՆ ՌԻ ԿՐԱԿԵԼԸ

Հրացանն ուսին ձիշտ դեմ տալու համար պետք է արագ բարձրացնել նրան ախքան, վար նա ունենա աչքի բարձրության մակարդակին հավասար նշանոց : Հետո պետք է ուղղել նշանին, ամուր սեղմելով նրա խզատակը վզի և ոջ ուսի արանքը : Այդ ժամանակ գլուխը քիչ առաջ և տարվում դեպի խզակոթք, բայց առանց

վիղը ձգելու: Գլուխը շատից գուրս գեղի խզակաթը
 ծռելը և վիզն առաջ ձգելը առաջ և բերում գլխի դող-
 գողոց: Հետո ձախ աչքը փակում և, իսկ աջը դնում և
 այնպես, վոր հաստիկի զազաթը յերևա նշանացի դի-
 աոցի մեջտեղում նրա վերևի յեղբերին հափափար (հա-
 փափար հաստիկ): Աջ ձեռքի արժունկը քիչ բարձրաց-
 նում են, քանի վոր դրանով մեծանում և ուսի փուր:
 Զախ արժունկը շուտ են տայիս հրացանի տակը և
 սեղձում են ժարձնին կամ հենում են փամփուշտի պա-
 յուտակին: Զախ ձեռքի ափով բռնում են հրացանը
 ձեռքի յերկարությամբ, վորտեղ հարձար և: Զախ ձեռ-
 քով առանձնապես կարիք չկա հրացանն ստուր սեղ-
 մել: Յեղ ահա թե ինչու. հրացանի ամբողջ ծանրու-
 թյունը հրաձգության ժամանակ բնկնում և ձախ ձեռքի
 վրա: Մեծ մտամբ մարդկանց ձախ ձեռքը ավելի
 թույլ և լինում, քան աջը և ամեն մի ուժեղ սեղձում
 նրան ավելի շատ և թուլացնում: Զախ ձեռքն սկսում և
 դողալ, իսկ նրա հետ նաև հրացանը: Իսկ յեթև հրա-
 ցանն և դողում, հիշա արձակյուն լինել չի կարող: Աջ
 ձեռքի մատերը ինչպես և հրաձգությանը պատրաստ-
 վելիս, ստուր պահում են հրացանը, խտտելով նրա
 պարանոցը: Տարբերությունը միայն այն և, վոր հրա-
 ցանն ուսին դեմ տայիս, ցուցամասն իր յերկրորդ խա-
 ցով քիչ դիպչում և վայրիջույց ձգանին: Յեթև հրա-
 ցանն տյղպես պահենք, նա շատ կայուն կլինի:

Այստեղ, ամենից կարևորն և հատուկ ուշադրու-
 թյուն դարձնել աջ ձեռքի թաթի դրության վրա: Հրա-
 ցանի շուտ ու մուտ շտայր կախված և աջ ձեռքը հաջոյ
 բռնելուց: Հրաձգության ժամանակ հրացանը ավելի
 կայուն դարձնելու համար, առաջարկվում և նույնպես
 սպափել հրացանի փոկից: Յյղ փոկն ուղղակի փաթա-

թում են ձախ ձեռքի վրա աջուպես, վոր նա հեռարան դառնա ձեռքի համար: Փոկի յերկարությունն այդ դեպքում կարող ե լինել ամեն տեսակ. նախած հրաձգի կազմվածքին և նրա ձեռքի յերկարությանը:

Այժմ, յերբ հրաձիգը միանգամայն պատրաստ և կրակելու համար, մնում և միայն կրակել այսինքն, ցուցամատով վայրիջույց ձգանք քաշել: Սահուն կերպով, առանց ցնցումի, ցուցամատով վայրիջույց ձգանքի քաշելը շատերին սկզբում չի հաջողվում:

Ուստի, յուրաքանչյուր հրաձիգ պետք և վարժվի վճռականորեն, բայց սահուն կերպով հետզհետե ուժեղացնել ցուցամատի ճնշումը ձգանքի վրա: Ամենից առաջ պետք է իմանալ, վոր ձգանք պետք է քաշել ցուցամատի յերկրորդ խողով: Ինչպես ասել ենք, աջ ձեռքի մատերով ամուր, բայց վոչ շատ ուժեղ պետք և սեղմել աղուստի պարանոցը և դրա հետ միասին հետըզհետե ուժեղացնել ցուցամատի ճնշումը ձգանքի վրա: Սակայն մատի ճնշումը ձգանքի վրա պետք և ավելացնել միայն այն դեպքում, յերբ նշանառության գիծը ընկնում և այն կետին, վորին հրաձիգը նշան և բրունում:

Քանի դեռ նշանառության գիծը չի ընկնում նշանառության կետին, ձգանքի ճնշումը վոչ կարելի յե ուժեղացնել, վոչ ել թուլացնել:

Յեթե ձգանք այդպես քաշենք, հրահանք յերբ հարկավոր և, ինքը կազատվի ձգանքի զսպանակի առտամից և արձակյունը տեղի կունենա հրաձիգի համար անսպասելի ձևով: Իսկ յեթե հրաձիգը արձակյունին չի սպասում, ուրեմն նա չի ել լարում իր մկանները հետահարվածը թուլացնելու համար: Ուրեմն պետք և ձգանք քաշելը և նշան բռնելը կատարվի միաժամա-

նակ, վորոպէս զի ամենակարեւոր ժամենաւում նշանաւոր-
թյունը շփոշանա : Հրաձգութեան և հատկապէս ձգանք
բաշխու ժամանակ, շատ անհրաժեշտ և նաև հետեւի
շնչառութեանը :

Նախջան նշան բռնելը պետք և խորը և դանդաղ
ներշնչել, իսկ հետո դանդաղ ևլ արտաշնչել, բայց վնշ
միկնչև վերջը, այլ մի փոքր շնչառությունը պահելով :
Միայն դրանից հետո պետք և նշան բռնել : Յետեւ հրա-
ձիգը հրաձգութեան ժամանակ շնչի, նրա կուրծքը կը-
չարժփի. իսկ յետեւ կուրծքը շարժվում և, նա անպայ-
ման հրացանը կշեղի նշանից : Դա հիմնականն և, վորը
պետք և միտը պահել. իսկ այժմ խոսենք այն մասին,
իև ինչ են առաջարկում մեզ լավ հրաձիգները մրցում-
ների հրաձգութեան ժամանակ, մարտական պարադայից
դուրս :

Նախ և առաջ, նրանք ասում են՝ յետեւ դու վոր-
եև տեղ, դաշտում կամ հրաձգարանում կրակել ևս
սովորում, լավ կլինի հրաձգութեան ժամանակ վոշ մի
արող շարժում չդործես : Մեծ սխալ կլինի դեպի հրա-
ձգարան վաղելը :

Հրաձգությունից առաջ ծանր Ֆիզիքական աշխա-
տանքը, մանավանդ յետեւ նա կրում և մրցման բը-
նույթ, կարող և ազդել ձեռքերի վրա՝ նրանք ամուր
լինել շեն կարող : Այդ պատճառով էլ նման հրաձգու-
թյունից առաջ, ամէլի լավ և այնպիսի աշխատանք-
ներ չկատարել, ինչպիսին որինակ, ցախ ջարդելն և :
Յետեւ աչքերն ուժեղ լույսից հողնում են, հրաձգու-
թյունից առաջ պետք և հանդիստ սալ նրանց : Դրա
համար էլ պետք և աչքերը մի քանի վայրկյան փակել
և դրանից հետո միայն անցնել հրաձգութեան :

Պատկամ կրակելու դեպքում իր հերթին սպասե՛

լու ժամանակ հրաձիգը պետք է լավ փակի աչքերը, խոնարհելով գլուխը դեպի ներքև :

Յեթե մենակ չես կրակում, լավ կլինի ընկերներիդ հրաձգութեան արդյունքներին չհետևես : Պետք է լինել համոզված և հանդիստ, ուշադրութեամբ չդարձնելով, թե ինչ է կատարվում շրջապատում :

Ամեն դրութեամբ, մանավանդ պատկած կրակելիս, պետք է ոձիքը արձակած ունենալ : Առանց այն ել լավ պատրաստած ոձիքն անզամ նեղ կլիմա : Իսկ յեթե այդպես է, արյունն էլ դժվարութեամբ կրարձրանա դեպի գլուխը, վորից աչքերն արագորեն կհոգնեն, իսկ դա վատ կանդրադառնա նշանառութեան վրա :

Բացի այդ, հրաձգութեան ժամանակ աչքերը չպետք է թարթել : Թեկուզ և մեկ վարկյան թարթելու դեպքում չես տեսնի, թե ուր գնաց գնդակը, ուստի և չես իմանա, թե արդյո՞ք նա դիպավ նշանին : Շատերն արձակյունից վախենալով, այդ ժամանակ վեր են թռչում : Պարզ է, վոր վեր թռչելիս հրացանը ևս կցնցվի և ի հարկե դարձյալ կառաջանա վրիպում :

Մենք բավական շատ խոսեցինք այն մասին, թե ինչպես պետք է պատրաստվել հրաձգութեան համար, թե ինչպես պետք է նշան բռնել և կրակել : Բայց իրոք այդ բոլորն անելու համար հարկավոր է ընդամենը մի բանի վարկյան : Լավ հրաձիգը մեկ բոպեյում կարձակի 10-12 գնդակ, վորոնց կեսը նշանին կդիպչի : Ստիպյալ ինչպե՞ս ձեռք բերել այդպիսի արագ և գիպուկ կրակ : Ճիշտ, արագ և ճարպկորեն կրակ բանալու պատրաստվելուն, վարժվելու համար մեծ փորձ և հարկավորություն է ժամանակ :

1. Որինակ՝ վորպեսզի իմանանք, թե սարբեր հետախույզութեան վրա ինչպես պետք է նշանացույց դնել,

անհրաժեշտ և շատ լավ ուսումնասիրել չքանակի և հիմքի վրա գանձող բոլոր թվերը: Աւրեմն այդ գործում պետք և վարժվել:

2. Հրացանը լցելու, դատարկելու և նշանոցը հաստելու ժամանակ պետք և դարձյալ փորձով վարժվել՝ այդ գործողություններից ամեն մեկի վրա գործ դնել 2-ից մինչև 5 վարկյան: Պետք և ձեռք բերել այնպիսի նարպիսթյուն, վոր հրացանը լցնելիս և նշանոցը հաստելիս հրաձիգը նայի վող թե հրացանին, այլ նշանին:

3. Բազմական և խմանալ, թե զնդակի շեղման վրա ինչպես են ազդում ամենափոքր սխալները՝ նշանառության դեպքում հրացանը շուռ ու մուռ դալու, ձգանը ցնցելու ժամանակ և այլն, վարպետի հասկաանք, թե ինչպես պետք և վարժվել հրացանը ուսին դեմ տալուն, նշանառությանը և ձգանը իջեցնելուն:

4. Վարպետի հրացանը ուսին դեմ տալիս ձեռքերը չզոդան, պետք և ամեն որ մեկ քառորդ ժամ մեկ ձեռքով բարձրացնել հրացանը, բռնելով նրա խղակոթից: Կարելի չե այդպես պահել նաև ուսին դեմ տված, այդ նույնպես ձեռքերի համար լավ մարզանք և:

Մի խոսքով դիպուկ հրաձգության յեղանակները ուսումնասիրվում են միմիայն գործնականում: Միայն հրացանի ամենորջա վարժություններն են, վոր կարող են մեկ ողնել յուրացնելու այդ արվեստը:

Քանի դեռ չես սովորել վորևե վարժություն ճիշտ կատարել, դու չես կարող հրաձգության անցնել: Միայն սովորությունները կարող են փոխվել հաստատուն սովորությունների, իսկ դա մեծ վնաս կհասցնի, քանի վոր այդ դեպքում չի կարելի դիպուկ կրակել սովորել:

ՀՐԱՋԳՈՒԹՅՈՒՆ ԾԱՐԺՎՈՂ ՆՇԱՆՆԵՐԻՆ

Շատ կարևոր է սովորել հրացանը նշանառության կետից ճիշտ տեղափոխելը, յերբ կրակում էս շարժվող նշաններին :

Յեթե նշանը շարժվում է ուղղակի դեպի հրաձիգը, այդ դեպքում վոչ նշանոցը և վոչ էլ նշանառության կետը փոխելու կարիք չկա : Գնդակն այնքան արագ կթռչի, վոք նշանը այնքան էլ չի կարողանա դեպի առաջ շարժվել : Սակայն յերբ նշանը շարժվում է մի կողմի վրա, նշանառության կետը պետք է նրանից առաջ դրցել, վորպեսզի դնդակը շարժման ճանապարհին նրան դիպչի :

Վորպեսզի լավ հիշենք, թե այդպիսի դեպքում հրացանը վորքան պետք է տեղափոխել նշանառության կետից, այստեղ դետեղված են նկարներ, վորոնց վրա այդքանը կարելի յե տեսնել :

Ահա այն բոլորը, վոր պետք է իմանալ ճիշտ կրակելու համար :

Հրաձգային, ինչպես և ամեն մի գործում ի հարկե բնածին ընդունակությունները նշանակություն ունեն : Իայց ընդունակություններով ծնված մարդկանց թիվը քիչ է : Իսկ լավ հրաձիգներ շատ ու շատ կան :

Ուրեմն լավ հրաձիգներն այնպես չեն ծնվում, այլ մարզվում են համառ փորձով :

Այստեղից մի յեզրակացություն. լավ կրակել սովորելու համար պետք է իմանալ, բե ինչպես և ինչ բանում ավելի պետք է վարձվել :

Յեւ ճիշտաց այդ մասին է խոսվում այս գրքում :

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ՆՇԱՆ ԲՈՆԵԼ ԿՐԱԶԳՈՒ-
ԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ 200 ԳՆՅԼԻ ՎՐԱ

ՆԵՏԵՎԱԶՈՐ



1/2 ժամ ղեկի վրա 1/2 ժամ ղեկի վրա

ՆԵՇԵԼԱԶՈՐ



2 ժամ ղեկի վրա 1 ղեկի վրա



Նկ. 8. 1 1/2 ժամ ղեկի վրա

ԻՆՅՊԵՍ ԴԵՏԲ Ե ՆՇԱՆ ԲՈՆԵԼ ՀՐԱԶԳՈՒ-
ԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ 400 ԲԱՅՆԻ ՎՐԱ

ՆԵՇԵԼԱԶՈՐ



Հաստ վիպիկի առաջ 1 ժամ 1/2

ՆԵՇԵԼԱԶՈՐ



Հաստ վիպիկի առաջ 1 ժամ 1/2


Հաստ վիպիկի առաջ 2 ժամ



Հաստ վիպիկի առաջ 5 ժամ

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿՐԱԿԵԼ ԿՐԱԶԳՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ 600 ԲԱՅԼԻ ՎՐԱ

ՀԵՏԵՎԱԶՈՐ




Համարիկի մասը 1/2 1/2 Գրամի մասը 1

ՀԵՏԵՎԱԶՈՐ



Հիւս. գլխին՝ 1 1/2 քառ
Գեղիկի մասը 1


Հիւս. գլխին՝ 3 քառ
Գեղիկի մասը 1



Նկ. 10. Հիւս. գլխին՝ 8 քառ Գեղիկի մասը 1

ԻՆՉՊԵՍ ՊԵՏԲ Ե ԿՐԱԿԵԼ ԿՐԱԶԳՈՒԹՅԱՆ
ԺԱՄԱՆԱԿ 800 ԲԱՅՆԻ ՎՐԱ

ՆԵՏԵՎԱԶՈՐ



1 1/2 քալի զեպի առաջ

2 քալի զեպի առաջ

ՆԵՄԵԼԱԶՈՐ



Ձիու զլիսին՝ 2 քալի
զեպի առաջ


Ձիու զլիսին՝ 4 քալի
զեպի առաջ



Նկ. 11. Ձիու զլիսին 10 քալի զեպի առաջ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

| | Եջ |
|--|----|
| Ի՞նչ պետք է իմանա ե կարողանա անել հրաձիգը | 3 |
| Կարճիք բանակայինն առանց աչքաչափի հրաձիգ չե | 4 |
| Հրացանի մարտական հատկությունները | 5 |
| Գեղակի քոչվի ուսումնասիրությունն արձակյու- նի ժամանակ | 6 |
| Նշանատության կետի բնութությունը | 13 |
| Հրաձգությանը պատրաստվելը | 17 |
| Հրացանը լցնելն ու դատարկելը | 22 |
| Նշանոցի հաստումը | 23 |
| Հրացանն ուսին դեմ տալը | 24 |
| Հրաձգություն շարժվող նշաններին | 30 |



ԳԱՆ Հիմնարար Գիտ. Գրադ.



FL0038669

[074]

A $\frac{I}{3860}$

ФРЕНС 10 ЧЛН.

С. БЕЛОВ

Как научиться метко
стрелять из винтовки